Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Անունը, ազգանունը	Իգնատի Առաքելյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Գերմանիայի Դաշնային Հանրապետության Վայհենշտեֆան-Թրիսդորֆ և Բեռլին 2018 թվականի հունվարի 17-21-ը
4.	Հրավիրող կողմը	Գերմանիայի Դաշնային Հանրապետության գյուղատնտեսության դաշնային նախարար Քրիստիան Շմիդթ
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	- Այցելություն Գերմանիայի Դաշնային Հանրապետության Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարան՝ ՀՀ ագրարային բնագավառի մասնագետների պատրաստման և վերապատրաստման հարցեր քննարկելու նպատակով: - Մասնակցություն «Անասնաբուծության ապագայի ուրվագծում՝ կայուն, պատասխանատու և արդյունավետ կերպով» խորագրով պարենի և գյուղատնտեսության գլոբալ ֆորումին, ինչպես նաև ֆորումի շրջանակներում կազմակերպվող գյուղատնտեսության նախարարների 10-րդ համաժողովին: Համաժողովին մասնակցել են 69 երկրների գյուղատնտեսության նախարարներ: Համաժողովը նախագահում էր Գերմանիայի Դաշնային Հանրապետության գյուղատնտեսության դաշնային նախարար Քրիստիան Շմիդթը: - Մասնակցություն <<Բեռլինյան կանաչ շաբաթ>> գյուղատնտեսական միջազգային ամենամյա ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությանը:
6.	Քննարկված թեմաները	Կոմյունիկեի շրջանակում քննարկվել են կենդանական ծագման մթերքների՝ մասնավորապես մսամթերքի, կաթնամթերքի և ձվամթերքի անհրաժեշտությունը, սննդամթերքի անվտանգության հիմնահարցերը, կարևորությունը և աճող պահանջարկը բավարարելուն ուղղված քայլերը: Քննարկվել են ոլորտում ընդգրկված ավելի քան 1,3 մլրդ մարդկանց բարեկեցության բարձրացմանն ուղղված քայլերը: Միջոցառման շրջանակներում քննարկվել են նաև՝ - շրջակա միջավայրի պաշտպանության համատեքստում բնական պաշարների օգտագործման արդյունավետության

		բարձրացմանն ուղղված քայլերը; - կենդանիների առողջության և բարեկեցության բարձրացմանն ուղղված քայլերը; - առևտրի խոչընդոտները և ազատականացման ազդեցությունը տնտեսությունների վրա, Առևտրի համաշխարհային կազմակերպության դերն ու նշանակությունը, ինչպես նաև ապագա մարտահրավերները:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	- Հանդիպում Վայհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի նախագահ Դր. Էրիկ Վոյլիթի հետ, որի ընթացքում քննարկվել են միջազգային մագիստրոսական ուսուցման շրջանակում համագործակցության ակտիվացմանն ու ընդլայնմանն ուղղված հարցեր: Կողմերը քննարկել են Հայաստանում ուսուցման և փորձարկման կենտրոնի ստեղծման գործում Թրիսդորֆի գյուղատնտեսական կրթական հաստատությունների և Վայհենշտեֆանի-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի հետ համագործակցության հնարավորությունները: Ներկայացվել է Թրիսդորֆի տարածքի առանձին կրթական հաստատությունների գործունեությունը, այդ թվում՝ կրթական կենտրոնի կառուցվածքը և գործունեության հիմնական ուղղություններն ու առանձնահատկությունները, ինչպես նաև գյուղատնտեսների վերապատրաստման գործընթացը: - Հանդիպում-ճեպազրույց ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գլխավոր տնօրեն Գրացիանո դա Սիլվայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են կենդանիների առողջությանը, պատվաստումներին, անասնաբուժական դեղամիջոցների որակին վերաբերվող հարցեր, ինչպես նաև ՀՀ-ում ՊԳԿ-ի կողմից իրականացվող ընթացիկ ծրագրերը և հետագա ծրագրերի իրականացման հնարավորությունները:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	- Համաժողովի արդյունքում գյուղատնտեսության նախարարների կողմից ընդունվել է համատեղ կոմունիկյե և կոչ է արվել մասնակիցներին ազգային մակարդակներում իրականացնել դրանում առաջարկված գործողությունները:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝	- Առաջարկվել է համաժողովին մասնակից երկրներում անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել կոմյունիկեով առաջարկված գործողությունների իրագործման ուղղությամբ:

	եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյան ՀՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի փորձագետ Աշոտ Գրիգորյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	23.01.2018թ.